ՀՈԴՎԱԾՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ 1900—1914 ԹԹ.

Պ. Պ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

XX դ. սկզբին Արևելյան Հայաստանի արդյունաբերական ձեռնարկություններում, այդ թվում արհեստանոցներում, ինչպես նաև երկաթուղում աշխատող բանվորների քանակը մոտավոր հաշիվներով 10.000 էր[1]։ Արևելյան Հայաստանի ամենախոշոր արդյունաբերական ձեռնարկությունները, որտեղ կենտրոնացված էր շուրջ 5000 բանվոր, Ալավերդու և Ղափանի հանքերն ու պղնձաձուլական գործարաններն էին։ Դարասկզբին Արևելյան Հայաստանի բանվոր դասակարգը գտնվում էր տնտեսական և իրավական ծանր պայմաններում։ Խոշոր արդյունաբերական ձեռնարկություններում աշխատանքային օրը տևում էր 12—14 ժամ[2]։ Այն պակաս երկարատև չէր նաև միջին ու մանր ձեռնարկություններում, զանազան արհեստանոցներում և այլն։ Միայն համառ գործադուլային պայքարի շնորհիվ, 1907 թ. հուլիսի 23-ին Երևանի նահանգապետի կարգադրությամբ խնդիր դրվեց վերոհիշյալ ձեռնարկությունների համար ձմռան ամիսներին սահմանել 11-ժամյա, իսկ գարնան-ամռան ամիսներին՝ 12-ժամյա աշխատանքային օր[3]։ Ցածր էր նաև բանվորների աշխատավարձը։ Այն որոշ չափով բարձր էր միայն ֆրանսիական ակցիոներական կապիտալին պատկանող «Կովկասյան արդյունաբերական և մետաղագործական ընկերության» ձեռնարկություններում։ Արխիվային նյութերը և վիճակագրական տեղեկագրերը որոշ չափով հնարավորություն են տալիս ճշտելու տարաբնույթ աշխատանք կատարող բանվորների ամսական աշխատավարձի չափը։

Կովկասյան լեռնային վարչությունը 1904—1906 թթ. Երևանի, Ելիզավետպոլի նահանգների և Կարսի մարզի չափահաս բանվորների օրավարձը սահմանել էր՝ արական սեռի չափահաս բանվորի համար 60 կ., դեռահասներինը (15—17 տարեկան)՝ 40, իսկ փոքրահասակներինը (12—15 տարեկան)՝ 25 կ.։ Իգական սեռի համար համապատասխանաբար կազմում էր 50, 35, 20 կ.[4]։

1907—1909 թթ. պաշտոնական վիճակագրության տվյալներով չափահաս բանվորների օրավարձը սահմանված էր 80—90 կ.։ Այսպիսով, 1904 թ. 60 կոպեկի փոխարեն 1907 թ. բանվորի օրավարձը կազմել է 80—90 կ.[5]։ Հե-

---

1 Վ. Ա. Պարսամյան, Հայ ժողովրդի պատմություն, հ. III, Երևան, 1967, էջ 373, Մ. Ադոնց, Հայաստանի ժողովրդական տնտեսությունը և հայ տնտեսագիտական միտքը 20-րդ դ. սկզբին, Երևան, 1968, էջ 285։

2 Գ. Ղարիբջանյան, Լենինը և Անդրկովկասը 1893—1914 թթ., Երևան, 1970, էջ 72։

3 Մ. Ադոնց, նշվ. աշխ., էջ 291։

4 ЦГИА Груз. ССР, ф. 265, оп. 1, д. 61, л. 15.

5 Նույն տեղում, գ. 90, թ. 3։

տևաբար, չափահաս բանվորի միջին օրավարձը 1907 թ. բարձրացել է 40—50%-ով։ Մոտավորապես նույնպիսի հարաբերությամբ աճել է նաև պատանիների, երեխաների և կանանց միջին տարեկան աշխատավարձը։ Աշխատավարձի բարձրացումը հեղափոխական շարժումների վերելքի հետևանք էր։ Դա ստիպված էին խոստովանել անդամ իշխանությունների ներկայացուցիչները։ 1909 թ. փետրվարի 4-ին Կովկասյան 4-րդ օկրուգի օկրուգային ինժեները Կովկասյան լեռնային վարչությանը հայտնել է, որ լեռնարդյունաբերական ձեռնարկություններում տեղի ունեցած գործադուլային շարժումների հետևանքով բանվորների ամսական աշխատավարձը զգալիորեն բարձրացվել է։ Այնուհետև նա վարչությանն առաջարկում էր բանվորների օրավարձը հաջորդ երեք տարիների համար սահմանել որոշ չափով բարձր[6]։

Հեղափոխական շարժումների վերելքի տարիներին աննշան չափով բարելավվեց նաև մանր ձեռնարկությունների բանվորների ծանր դրությունը։ 1906 թ. Ալեքսանդրապոլի կոշկակարները գործադուլային պայքարի շնորհիվ վարպետներին ստիպեցին 10%-ով բարձրացնել աշխատավարձը, սահմանել 12 ժամյա աշխատանքային օր։ Նույն ճանապարհով իրենց տնտեսական պահանջների բավարարմանը հասան նաև Երևանի ատաղձագործ ենթավարպետներն ու աշակերտները[7]։

1905—1907 թթ. հեղափոխությունից սարսափած ցարական չինովնիկները բանվորական նոր ելույթները կանխելու նպատակով միջոցներ էին որոնում ձեռնարկատերերի ահավոր չարաշահումներին սահման դնելու համար. Այսպես, օրինակ, 1906 թ. հունիսի 26-ի շրջաբերականով Ռուսական կայսրության առևտրի և արդյունաբերության մինիստրությունը ֆաբրիկա-գործարանային տեսչություններին պարզաբանում էր, որ ձեռնարկատերերը բանվորների աշխատավարձից պահումներ են կատարում նրանց բժշկական օգնություն ցույց տալու համար, թեև այդ ծախսերը պետք է հոգան իրենք[8]։

1906 թ. հունիսի 4-ի գրությամբ նույն մինիստրության արդյունաբերական բաժինը ձեռնարկատերերից պահանջում էր, որ բանվորների աշխատավարձից կատարվող յուրաքանչյուր պահում գրանցվի հաշվային գրքերում և բանվորի գրքույկում։ Ըստ որում, հաշվային գրքում պարտադիր կարգով պետք է պահվեր բանվորի համաձայնությունը հաստատող դիմումը[9]։ Ակնհայտ է, որ այդ քայլը կատարվել է հեղափոխական շարժումների ճնշման տակ։ Սակայն 1907 թ. հունիսերեքյան պետական հեղաշրջումից հետո ռեակցիան հարձակման անցավ բոլոր ճակատներում, այդ թվում՝ տնտեսական բնագավառում։ Ձեռնարկատերերն օգտվելով երկրում ստեղծված քաղաքական նպաստավոր իրադրությունից, ետ են վերցնում հեղափոխության տարիներին կատարած զիջումները, երկարացնում բանվորական օրը, կրճատում աշխատավարձը։ 1908 թ. գնահատականներն իջեցվում են 10—15%-ով, իսկ բանվորական օրը հասցվում է 12—13 ժամի։ Վերստին հսկայական չափերի

---

6 Նույն տեղում, ֆ. 165, գ. 106, թ. 3։

7 «Революционное движение в Армении 1905—1907 гг.», сборник документов и материалов, Ереван, 1955, стр. 187, 201.

8 ЦГИА Груз. ССР, ф. 265, оп. 1, д. 80, л. 13.

9 Նույն տեղում։

հասան կողոպտիչ տուգանքները[10]։ Այսպես, օրինակ, 1909 թ. դեկտեմբերի 23-ին Թիֆլիսի նահանգական վարչության ընդունած որոշումով 1910—1912 թթ. համար Բորչալուի գավառի արդյունաբերական ձեռնարկությունների չափահաս բանվորների օրական միջին աշխատավարձը նախորդ երեք տարիների 90 կ. փոխարեն սահմանվում է 80 կ.[11]։ 1910—1912 թթ. նշված գավառում տարբեր սեռի ու տարիքի բանվորների վարձատրման կարգը անփոփոխ է մնում։ Կանանց օրավարձը սահմանված էր 60, 15—17 տարեկան տղաներինը՝ 50, նույն տարիքի աղջիկներինը՝ 35, 12—15 տարեկան տղաներինը՝ 40, իսկ նույն տարիքի աղջիկներինը՝ 30 կ.[12]։

«Կովկասյան արդյունաբերական և մետաղագործական ընկերության» Ալավերդու և Զանգեզուրի ձեռնարկություններում 1911 թ. բանվորների ամսական միջին աշխատավարձը կազմել է 22 ռ. 95 կ., 1912 թ.՝ 24 ռ. 90 կ., իսկ 1913 թ.՝ 24 ռ.[13]։ Մինչդեռ այդ ժամանակաընթացքում օրավարձը շարունակում էր մնալ անփոփոխ։ Դժվար չէ նկատել, որ օրավարձի նորմաները ցածր էին ամսական միջին աշխատավարձի իրական միջին օրականից։ Այսպես, 1912 թ. փաստական օրական միջին աշխատավարձը կազմում էր շուրջ 92,2 կ., մինչդեռ օրավարձը սահմանված էր 80 կ.։ Անհամեմատ ծանր էր Զանգեզուրի պղնձարդյունաբերական շրջանի, Երևանի նահանգի, Կարսի մարզի լեռնարդյունաբերական ձեռնարկությունների բանվորների վիճակը։ Կովկասյան լեռնային վարչության 1912 թ. դեկտեմբերի 10-ի որոշումով այդ ձեռնարկությունների արական սեռի չափահաս բանվորների օրավարձը 1913—1915 թթ. կազմելու էր 68, 15—17 տարեկաններինը՝ 47, իսկ 12—15 տարեկաններինը՝ 31 կ.։ Իգական սեռի բանվորների օրավարձը կազմելու էր համապատասխանաբար՝ 52, 37 և 21 կ.[14]։

Եթե 1914 թ. հուլիսին «Կովկասյան արդյունաբերական և մետաղագործական ընկերության» Ալավերդու ձեռնարկություններում մեկ բանվորի ամսական աշխատավարձը կազմել է 24 ռ. 80 կ., ապա Զանգեզուրի ձեռնարկություններում՝ 18 ռ. 70 կ.։ Այս տարբերությունն իրավացիորեն բացատրվում է Զանգեզուրում ագրարային գերբնակչությամբ և Անդրկովկասի արդյունաբերական ձեռնարկություններից ունեցած հեռավորությամբ[15]։ Զանգեզուրի բանվորների ծանր դրության մասին է վկայում լեռնային ինժեներ Կոլեսնիկովի 1912 թ. հունիսի 4-ի արձանագրությունը։ Համաձայն այդ փաստաթղթի, 1912 թ. հունիսի 4-ի տվյալներով, Ղանթարի հանքերի բանվորներից պարտք են ունեցել 458-ը։ Նրանցից 295-ը եղել են հանքափորներ, իսկ 163-ը զբաղված են եղել օժանդակ աշխատանքներում։ Բանվորներից 26-ը հանքերում աշխատանքի էին անցել 1912 թ. մայիսի 27-ից հետո[16]։ Այսպիսով՝ պրոլետարականացող գյուղացիներն աշխատանքի անցնելու առաջին իսկ օրերին ստիպված պարտք էին վերցնում ձեռնարկատերերից։ Պարզ է, որ նման պայմաններ-

---

10 Մ. Վ. Արղումանյան, Բոլշևիկների գործունեությունը և հեղափոխական շարժումները Հայաստանում 1907—1917 թթ., Երևան, 1959, էջ 29—30։

11 ЦГИА Груз. ССР, ф. 265, оп. 1, д. 106, л. 14.

12 Նույն տեղում։

13 Մ. Ադոնց, նշվ. աշխ., էջ 291։

14 ЦГИА Груз. ССР, ф. 265, д. 136, л. 6.

15 Մ. Ադոնց, նշվ. աշխ., էջ 292։

16 ЦГИА Груз. ССР, ф. 265.

րում վերջիններս կարող էին կամայականորեն տնօրինել բանվորների աշխատանքի պայմանների ու աշխատավարձի հարցերը։ Բանվորների նյութական անմխիթար վիճակը ավելի ակնբախ կդառնա, եթե նկատի ունենանք առաջին անհրաժեշտության ապրանքների գների թանկությունը, ապօրինի տուգանքները և այլն։

Դարասկզբին Արևելյան Հայաստանում դաժանորեն շահագործվում էին նաև երկաթուղային շինարարության մեջ աշխատող բանվորները։ Վարձակալներն ու ցարական չինովնիկները տառացիորեն կողոպտում էին նրանց։ Այսպես, վարձակալները յուրաքանչյուր 2,14 մ[8] աշխատանքի համար ստանում էին 2 ռ. 50 կ., իսկ բանվորներին վճարում 1 ռ. 30 կ.։ Պետական ձեռնարկությունում աշխատող բանվորն ամսական ստանում էր 18 ռ., մինչդեռ ինժեների աշխատավարձը կազմում էր 300—350 ռ., իսկ տեղամասի պետինը՝ 500—600 ռ.[17]։

Դրությունը շատ ավելի ծանր էր մանր արդյունագործական և առևտրական ձեռնարկություններում, որոնք բնորոշ էին Արևելյան Հայաստանին, որպես ազրարային հետամնաց երկրամասի։

1912 թ. Երևանի, Էջմիածնի, Սուրմալուի, Շարուր-Դարալագյազի և Նախիջևանի գավառներում գործում էին 344 բամբակազտիչ և բրնձի մաքրման ձեռնարկություններ, որոնցում աշխատում էր շուրջ 1240 բանվոր[18]։ Նույն թվականին Ալեքսանդրապոլի գավառում գործում էր 4 կաշվի, 2 օճառի արհեստանոց, 118 ալրաղաց, 5 աղյուսի, 1 կրի արհեստանոց, 12 ձիթհանք և 1 ներկատուն[19], ընդամենը՝ 143 ձեռնարկություն, որտեղ աշխատում էր 230 բանվոր։ Եթե նկատի ունենանք, որ ալրաղացների մեծ մասը բանվորներ չունեին, ապա պարզ կդառնա, որ յուրաքանչյուր արհեստագործական ձեռնարկությունում աշխատում էր 4—5 մարդ։ 1912 թ. Կարս քաղաքն ուներ գարեջրի 2, լիմոնադի 4, օճառի 1 գործարան և նավթի 5 պահեստ։ Գարեջրի գործարաններից յուրաքանչյուրում աշխատում էր 6, իսկ նավթի պահեստներից յուրաքանչյուրում՝ 6—8 բանվոր։ Փաստական տվյալների համաձայն քաղաքի 7 ձեռնարկություններում ու 5 պահեստում աշխատում էր ընդամենը 68 մարդ[20]։

Խոշոր ձեռնարկությունների բանվորների համեմատությամբ մանր արհեստագործական ձեռնարկությունների բանվորները զգալիորեն ցածր էին վարձատրվում։ Այսպես, օրինակ, եթե բամբակազտիչ ձեռնարկության բանվորն օրական ստանում էր 10—20, ապա խոշոր ձեռնարկության բանվորը՝ 30—50 կ.[21]։ Մանր արհեստագործական ձեռնարկությունների բանվորների նյութական ծանր վիճակը պայմանավորված էր նրանց թույլ համախմբվածությամբ և կազմակերպված տնտեսական ու քաղաքական պայքարի բացակայությամբ։ XIX դ. վերջերին, XX դ. սկզբին Արևելյան Հայաստանի արդյունաբերության մեջ զբաղված էին մեծ թվով անչափահասներ ու կանայք։ Այսպես, 1897 թ. ընդհանուր մարդահամարի տվյալներով, Երևանի նահանգի 5064 օրավարձու և ժամանակավոր բանվորներից 534-ը կանայք և մինչև 15 տա-

---

17 Ц. П. Агаян, К вопросу о формировании рабочего класса в Закавказье («Պատմա-բանասիրական հանդես», 1974, № 3, էջ 66)։

18 «Обзор Эриванской губернии за 1912 г.», л. 3.

19 ЦГИА Груз. ССР, ф. 415, д. 116, л. 2, 6 (հաշվումները կատարված են մեր կողմից)։

20 Նույն տեղում, գ. 132, թ. 1, 5, 8։

21 «Պատմա-բանասիրական հանդես», 1974, № 2, էջ 85։

ական երեխաներ էին։ Կարսի մարզի 2334 ժամանակավոր և օրավարձու բանվորներից 113-ը կանայք էին[22]։ 1906 թ. Ալավերդու պղնձահանքերում և գործարաններում աշխատող 2771 բանվորներից 125-ը երեխաներ էին[23]։ Հետագա տարիներին անչափահասների թիվը գնալով աճում էր։ Այսպես, օրինակ, 1914 թ. հուլիսին Ալավերդու պղնձահանքերի և գործարանների մշտական բանվորներից 326-ը 15—17, իսկ 108-ը՝ 12—15 տարեկան էին։ Նրանք բոլորը միասին կազմում էին մշտական աշխատող բանվորների 27%-ը[24]։ Ձեռնարկատերերն անչափահասներին սիրով էին ընդունում աշխատանքի, քանի որ միևնույն աշխատանքի համար նրանց ավելի քիչ վճարելով հսկայական շահույթ էին ստանում։ 1903 թ. Կարսի մարզում չափահաս բանվորի օրավարձը կազմում էր 60 կ., 15—17 տարեկան դեռահասներինը՝ 40, իսկ 12—15 տարեկան երեխաներինը՝ 25 կ.։ Երևանի նահանգում այն համապատասխանաբար կազմում էր 50, 35 և 25 կ.[25]։ 1907—1909 թթ. Բորչալուի գավառի չափահաս բանվորի օրավարձը կազմում էր 90, իսկ դեռահասներինը (15—17 տարեկան)՝ 60 կ.[26]։ 1913 թ. Բորչալուի գավառում չափահաս բանվորը ստանում էր 80, դեռահասները՝ 55, 12—15 տարեկան երեխաները՝ 40 կ.[27]։ Ձեռնարկատերերն անչափահասներին արտադրության մեջ ներգրավելով հնարավորություն էին ստանում էլ ավելի կրճատելու չափահաս բանվորների աշխատավարձը. «Եթե մինչև այդ բանվորին վճարելիս կապիտալիստը աչքի առաջ էր ունենում մասամբ բանվորի ընտանիքը, որովհետև նրան անհրաժեշտ է, որ այդ ընտանիքը գոյություն ունենա և բանվորների նոր սերունդներ մատակարարի արդյունաբերության համար,— այժմ այդ ընտանիքի անդամները իրենք արդեն սկսում են աշխատել, նա վճարում է բանվորին միայն այնքան, որքան անհրաժեշտ է նրա անհատական գոյության համար»[28]։

Բացի այդ, տեղացի բանվորների աշխատավարձի իջեցմանն էապես նպաստում էին նաև պարսկահպատակ բանվորները, որոնք գոյության միջոցներ վաստակելու հույսով մեծ խմբերով հեղեղում էին Անդրկովկասը, այդ թվում՝ Հայաստանի լեռնարդյունաբերական ձեռնարկությունները։ Այսպես, Բորչալուի գավառի 130 ձեռնարկություններում աշխատող 3537 բանվորներից 1775-ը օտարահպատակներ էին, որոնցից 1563-ը աշխատում էին լեռնարդյունաբերական ձեռնարկություններում[29]։ «Մանեսս» և «Պիրիտիկ» գործարանների 134 պարսկահպատակ բանվորներից միայն 3-ն էին աշխատում տեխնիկական որակավորում պահանջող արտադրամասերում։

Տեղացի բանվորների նյութական վիճակը ծանրանում էր նաև այն պատճառով, որ օտարահպատակների զգալի մասը ընտանիք չուներ և, բնականաբար, ավելի հեշտությամբ էր համաձայնվում ձեռնարկատերերի առաջարկած պայմաններին։ Ա. Ի. Միկոյանը խոսելով Ալավերդու հանքարդյու-

---

22 Գ. Ա. Հարությունյան, Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1905—1907 թթ., Երևան, 1956, էջ 13։

23 «Կայծ», 13. I. 1906։

24 Մ. Ադոնց, նշվ. աշխ., էջ 293։

25 ЦГИА Груз. ССР, ф. 265, оп. 1, д. 61, л. 14.

26 Նույն տեղում, գ. 90, թ. 3։

27 Նույն տեղում, գ. 162, թ. 33։

28 Ստ. Շահումյան, Երկեր, հ. 2, Երևան, 1955, էջ 71—72։

29 ЦГИА Груз. ССР, ф. 415, д. 88, л. 6. (Հաշվումները կատարված են մեր կողմից)։

նաբերական շրջանում աշխատող բանվորների թվի, ազգային կազմի, նյութական դրության մասին, գրում է, որ Ալավերդու պղնձաձուլական գործարանում աներևակայելի ծանր պայմաններում աշխատում էր մոտ երեք հազար մարդ, այդ թվում՝ Հյուսիսային Իրանից եկած մոտ հազար միայնակ բանվոր[30]։ Որոշ չափով օտարահպատակներ կային նաև Երևանի նահանգի մյուս դավառներում։

Հայաստանի և մասնավորապես Ալավերդու հանքարդյունաբերական շրջանում զգալի թիվ էին կազմում այստեղ հաստատված հույները։ 1914 թ. հանքերում աշխատում էին 59, իսկ «Պիրիտիկ» գործարանում՝ 72 հույն[31]։ Ձեռնարկատերերը օգտվելով նրանից, որ պարսկահպատակ բանվորները աշխատանքային հմտություն չպահանջող ծանր աշխատանքները պատրաստ էին կատարել ավելի ցածր աշխատավարձով, իջեցնում էին սեագործ բանվորների աշխատավարձի մինիմումը։ Բացի այդ, ցարական իշխանությունները ձգտելով թուլացնել աշխատավարձի բարձրացման համար բանվորների մղած պայքարի թափը, փորձում էին հակադրել ռուս և տեղացի բանվորներին, առաջիններին միևնույն աշխատանքի համար վարձատրելով ավելի բարձր։ Սակայն, չնայած դրան, ռուս բանվորները ոչ միայն չդարձան Անդրկովկասում ցարիզմի հենարանը, այլև քայլեցին հեղափոխական շարժման ավանգարդում, դարձան երկրամասի աշխատավորների ինտերնացիոնալ համախմբման ցեմենտող ուժը[32]։

Այսպիսով, աշխատանքային օրվա տևողությունն ու աշխատավարձի չափը փոխադարձաբար պայմանավորում էին միմյանց և բացասաբար անդրադառնում բանվորների նյութական կացության վրա։ Վ. Ի. Լենինն այդ առթիվ գրել է. «Ցածր աշխատավարձը և բանվորական երկար օրը շարունակ միասին են ընթանում և մեկն առանց մյուսի հնարավոր չէ։ Եթե աշխատավարձը ցածր է, ապա բանվորն անխուսափելիորեն ավելորդ ժամեր է աշխատելու, աշխատելու է նաև գիշերները, որպեսզի իր համար ապրուստի միջոց դատի»[33]։

Ծանր էին նաև բանվորների աշխատանքային պայմանները։ Արխիվային վավերագրերն ընդարձակ տեղեկություններ են հաղորդում բանվորների հետ տեղի ունեցած դժբախտ պատահարների մասին, որոնք մեծ մասամբ տեխնիկական անվտանգության ամենատարրական պայմանների բացակայության արդյունք էին։ Հանքագործ բանվորներն աշխատում էին մութ ու խոնավ խորշերում։ Մարդկային զոհերը սովորական երևույթ էին։ Նրանց աշխատանքային պայմաններն այնքան ծանր էին ու վտանգավոր, որ երբեմն անհանգստացնում էին նույնիսկ իշխանություններին։ 1904 թ. օկրուգային ինժեներ Ցեյտլինը Կովկասյան լեռնային վարչությանն ուղղված զեկուցագրում նշում էր, որ հանքերում հաճախ տեղի են ունենում փլուզումներ, որոնց հետևանքով բանվորները հաճախ ստանում են ծանր մարմնական վնասվածքներ կամ էլ մահանում։ Նա վարչությանը զգուշացնում էր, որ եթե անհրաժեշտ միջոց-

---

30 Ա. Ի. Մ ի կ ո յ ա ն, Պայքարի ուղիով, Երևան, 1972, էջ 39։

31 ՀՍՍՀ ԿՊԱ, ֆ. 195, ց. 1, գ. 288, թթ. 119—120։

32 Г. А. Галоян, Рабочее движение и национальный вопрос в Закавказье 1900—1922 гг., Ереван, 1968, стр. 19.

33 Վ. Ի. Լ ե ն ի ն, Երկեր, հ. 2, էջ 349։

ներ չձեռնարկվեն, ապա հանքերի շահագործումը կդադարեցվի[34]։ 1912 թ. հոկտեմբերի 30-ին օկրուգային ինժեների օգնական Լեմանի և Կոնդուրով եղբայրների պղնձահանքերի կառավարիչ ինժեներ Դայխեսի կազմած արձանագրություններում ասվում է, որ չնայած օկրուգային ինժեների 1912 թ. հունիսի 14-ի կարգադրությանը, բանվորների անվտանգությունը ապահովելու նպատակով Զանգեզուրի գործող պղնձահանքերում երկրորդ ելք չի բացվել[35]։ Վիճակը նույնն էր նաև Բարաբաթումի՝ Նազարբեկովին և Միրզոևին պատկանող հանքերում[36]։

Օկրուգային ինժեներ Յեյտլինն այցելելով Զանգեզուրի հանքաշխարհ, եկել է այն հետևության, որ պղնձահանքերում տեխնիկական անվտանգության կանոնները չեն պահպանվում, էլեկտրական հաղորդալարերը և ապահովիչներն այնքան ցածր են կախված, որ ամեն րոպե բանվորների հետ կարող է դժբախտություն պատահել։ Գործարաններում բանվորներն աշխատում էին առանց ապահովիչ ակնոցների[37]։ Դժբախտ պատահարների գիրք-մատյանների ոչ լրիվ տվյալների համաձայն, 1911 թ. Ալավերդում տեղի է ունեցել 83, 1912 թ.՝ 72, 1913 թ.՝ 75, 1914 թ.՝ 126 պատահար[38]։

Բանվորները միշտ բողոքում էին ձեռնարկատերերի անմարդկային վերաբերմունքի դեմ և իրենց աշխատանքի և կյանքի պայմանները բարելավելու նպատակով հաճախ դիմում գործադուլների։ Չնայած ինժեներա-տեխնիկական մասնագետներից շատերն աշխատում էին խափանել բանվորական շարժումները, ոմանք երբեմն պաշտպանում էին բանվորների տնտեսական պահանջները։ Իսկ առանձին մասնագետներ էլ, որոնք հարել էին սոցիալ-դեմոկրատական շարժմանը, պաշտպանում էին բանվորների թե՛ տնտեսական և թե՛ քաղաքական պահանջները։ Նրանցից էին Ս. Մելիք-Ստեփանյանը և Հ. Լ. Զորաբյանը[39]։

Անտանելի ծանր էին բանվորների կենցաղային պայմանները։ Օգտվելով առատ բանվորական ձեռքերի առկայությունից և կառավարության հովանավորությունից, ձեռնարկատերերը աշխատում էին արտադրանքի ինքնարժեքի իջեցմանը հասնել նաև բանվորների կենցաղային պայմանների բարելավման համար նախատեսվող միջոցների կրճատման հաշվին։ 1900 թ. լեռնային ինժեներ Իգնատովիչն իր զեկուցագրում նշել է, որ պղնձի ինքնարժեքի իջեցմանը պետք է հասնել ոչ միայն տեխնիկական բարեփոխումների և աշխատավորների աշխատավարձի իջեցման, այլև բանվորների կենցաղային կարիքների համար նախատեսվող ծախսերը կրճատելու հաշվին։ Եվ հակաբանվորական իր այդ առաջարկը նա փորձում էր պատճառաբանել նրանով, որ Ռուսաստանի բանվորները իբր սովոր չեն այնպիսի ճոխության, ինչպիսին գուցե

---

34 И. Г. Каспарова, Меднорудная промышленность дореволюционной Армении и иностранный капитал, Ереван, 1961, стр. 101.

35 ЦГИА Груз. ССР, ф. 265, д. 159, л. 2.

36 Նույն տեղում, ց. 1, գ. 158, թ. 2։

37 ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 195, գ. 475, թ. 5։

38 Նույն տեղում, ց. 1, գ. 498, թ. 2—239, գ. 235, թ. 5—246։

39 А. К. Григорянц, Формирование и развитие технической интеллигенции Армении, Ереван, 1966, стр. 57.

հարմար է ֆրանսիական բանվորներին, որովհետև, «դեռևս շատ անկուլտուրական են»[40]։

Պղնձարդյունաբերական բանվորներն ապրում էին կեղտոտ գետնափոր հանրակացարաններում՝ 20—25 մարդ մի սենյակում։ Ջնջին զանցանքի համար նրանք հաճախ ենթարկվում էին ծեծի ու տուգանքների, իսկ անհնազանդություն ցուցաբերելիս՝ անմիջապես հեռացվում էին աշխատանքից[41]։

Վախենալով բանվորական հուզումներից ցարական չինովնիկները երբեմն փորձում էին ինչ-որ չափով «խելքի բերել» ձեռնարկատերերին և փոփոխել բանվորների կենցաղային պայմանները։ 1903 թ. նոյեմբերին կազմված արձանագրությունում ասված է, որ Զանգեզուրի հանքարդյունաբերական շրջանում բանվորները զուրկ են բնակարաններից և ծվարում են գետնափոր տներում կամ էլ փոքրիկ խցիկներում[42]։ Նույն թվականին Ելիզավետպոլի նահանգապետ Լոստցաուն այցելելով Զանգեզուր նկատում է, որ կառուցվող բարաքները չեն կարող բավարարել սանիտարական ամենատարրական պահանջները։ Նահանգապետը գտնում է, որ եթե բարաքները այդ վիճակում շահագործման հանձնվեն, դարձյալ ձգձկվի հիվանդանոցի կառուցումը, անուշադրության մատնվի բաղնիքի շինարարության գործը, հանքերում շարունակեն օգտագործել մազութի լամպեր, ապա բանվորների շրջանում ձեռնարկատերերի նկատմամբ տրտունջի և դժգոհությունների համար առիթ կստեղծվի և իրենք ստիպված կլինեն գործ ունենալ լեռնարդյունաբերության այդպիսի խոշոր կենտրոնի հետ՝ «... չափազանց բարդ և դժվարին հանգամանքներում»[43]։

Ծայրահեղ վատ վիճակում էր գտնվում ինչպես ողջ բնակչության, այնպես էլ բանվորների բժշկական սպասարկման գործը։ Ինչպես Ալավերդու, այնպես էլ Զանգեզուրի հիվանդանոցում, որն ի դեպ մինչև 1913 թ. տեղավորված էր վարձու շենքում և ստացիոնար բուժման կարող էր ընդունել միաժամանակ ընդամենը 8 մարդ[44], աշխատում էին մեկական բժիշկ և 2—3 բուժակ կամ մանկաբարձուհի։ Բժշկական անհրաժեշտ գործիքներով ու օժանդակ հարմարություններով չապահովված, սահմանափակ քանակությամբ բժշկական աշխատողներ ունեցող այդ խղճուկ հիվանդանոցները, բնականաբար, չէին կարող էական բժշկական օգնություն ցույց տալ մի քանի հազարի հասնող բանվորներին ու նրանց ընտանիքներին։ Բանվորների նյութական, բնակարանային և աշխատանքային ծանր պայմանները, բուժսպասարկման խիստ անբավարար վիճակը, հասարակական սննդի օբյեկտներում տիրող հակասանիտարական անտանելի դրությունը պատճառ էին դառնում զանազան սուր վարակիչ տարափոխիկ հիվանդությունների տարածման, որոնք բազմաթիվ զոհեր էին տանում ու բազում տառապանքներ պատճառում աղքատության և խավարի մեջ խարխափող աշխատավորությանը։ Դրությունը ժամանակ առ ժամանակ այնքան սպառնալից էր դառնում, որ իշխանությունների բարձրաս-

---

40 И. Г. Каспарова, նշվ. աշխ., էջ 116։

41 Հ. Ս. Մելիքյան, Մարքսիստական կազմակերպությունները և ռևոլյուցիոն շարժումները Լոռիում (1899—1908), Երևան, 1957, էջ 61—62։

42 ЦГИА Груз. ССР, ф. 265, д. 51, л. 18.

43 Նույն տեղում, թ. 18—19։

44 Մ. Ադոնց, նշվ. աշխ., էջ 289—296։

տիճան ներկայացուցիչներն անգամ ստիպված ստեղծված վիճակից դուրս գալու ելք էին որոնում։ 1903 թ. մայիսին Ելիզավետպոլի նահանգապետը Կովկասյան լեռնային վարչությունից խնդրում է Զանգեզուրի լեռնարդյունաբերության շրջանը դուրս բերել սանիտարական ծանր վիճակից[45]։ Ինչ խոսք, մարդասիրական զգացմունքը չէր, որ անհանգստացնում էր նահանգապետին։ Իշխանություններն անհանգստանում էին միայն այն ժամանակ, երբ վարակիչ հիվանդությունները տարածվում էին կատաստրոֆիկ արագությամբ (որի հետևանքով խախտվում էին տնտեսական տարբեր շրջանների կապերը, նվազում էր բանվորների թիվը), երբ շոշափվում էին ձեռնարկատերերի և իշխանությունների շահերը, և վերջապես, երբ վտանգ էր սպառնում նաև իրենց ընտանիքներին։

Իշխանությունների ներկայացուցիչների թույլ ահազանգումները, սակայն, չբարելավեցին դրությունը։ 1904—1905 թթ. Հայաստանում մոլեգնում է խոլերան։ Երևանի նահանգական բժշկի ստուգումները ցույց են տալիս, որ բանվորների շրջանում խոլերայի տարածման գլխավոր պատճառներից մեկը նրանց բնակարանային ծանր պայմաններն են[46], բժշկական անբավարար սպասարկումը, բանվորական բնակավայրերի սանիտարական ծայրահեղ ծանր վիճակը[47]։ Պարզվում է, որ հիվանդ բանվորներին մեկուսացնելու համար պատրաստի բարաքներ չեն եղել։ Նահանգական բժշկի ստուգումները ցույց են տվել, որ հիվանդների մի մասը տեղավորված են եղել քանդման ենթակա տներում, մյուսները՝ վանքերի խցերում կամ էլ բանվորական բարաքում[48]։

Հայաստանի բանվոր դասակարգն ապրելով և աշխատելով տնտեսական ու քաղաքական ամենածանր պայմաններում, չէր հաշտվում իր ծանր դրության հետ։ Հետևելով ռուսական պրոլետարիատի հերոսական պայքարին, բոլշևիկյան կազմակերպությունների ղեկավարությամբ, նա 1905—1907 թթ. դասակարգային անհաշտ պայքարի դուրս եկավ ցարիզմի, ինչպես նաև օտարերկրյա և տեղական կապիտալիստների դեմ։

1905—1907 թթ. ռուսական առաջին հեղափոխությանը նրա ունեցած մասնակցությունը Հայաստանի բանվոր դասակարգի, առհասարակ հայ ժողովրդի պատմության փառապանծ էջերից է։

ПОЛОЖЕНИЕ РАБОЧЕГО КЛАССА АРМЕНИИ В 1900—1914 гг.

П. П. АРУТЮНЯН

Резюме

В начале XX в. наиболее крупными промышленными центрами Армении являлись алавердские и зангезурские медные рудники и заводы, где и был в основном сосредоточен рабочий класс. Имелось также много мелких предприятий, названных официальной статистикой «фабрич-

45 ЦГИА Груз. ССР, ф. 265, д. 51, л. 12.

46 Նույն տեղում, ֆ. 13, ց. 15, գ. 31բ, թ. 118։

47 «Обзор Эриванской губернии за 1904 г.», л. 103—104.

48 Նույն տեղում։

но-заводокой промышленностью». Только в Эриванокой губернии число их достигало нескольких тысяч. В начале XX в. Россия вступила в эпоху империализма, что еще более усилило эксплуатацию трудящихся масс. В тяжелых экономических и правовых условиях находился и рабочий класс Армении, в частности, рабочие медной промышленности в Алаверди и Зангезуре; здесь рабочий день достигал 12—14 часов. Тяжелые условия жизни, нужда и эксплуатация революционизировали трудящиеся массы Армении, которые во главе с рабочим классом поднялись на всенародную борьбу против царизма и буржуазии.